ԱՐԱՄ ԳՐԻԳՈՐՅԱՆ
(Ծննդյան 75-ամյակի առթիվ)

Մտքի լճացածությունը, որ մեզանում հաճախ խոսում է ավանդության անունից, ըստ էության ոչ մի առնչություն չունենալով նրա հետ, Արամ Գրիգորյանի թշնամին է, որին նա թշնամություն է անում իր մարգու ներքին բացառիկ զգայուն, նուրբ ու իմաստուն բարեկրթությամբ: Այս «բանավեճն» արտահայտվել է նրա բոլոր գրքերում՝ «Եղիշե Չարենցի պոեզիան», «Գեղարվեստական ոճի պրոբլեմները», «Գեղարվեստական ոճ և պատկերի կառուցվածք», «Գրականությունը և տեսությունը», «Գրական պրոցեսը և քննադատությունը» և այլն, հարյուրավոր հոդվածներում, տեսաքննական ակնարկներում, զեկուցումներում ու ելույթներում, որոնք 60-ական թվականներից ի վեր գարձան և ներկայումս էլ մնում են մեզանում գրական տեսաբանության նոր հոսանքի և՛ սկիզբը, և՛ ընթացքն ու զարգացումը: Ար. Գրիգորյանն առաջինն էր, որ գիտակցաբար, բայց անաղմուկ, առանց կուրծք ծեծելու շեղվեց գրականության տեսության ծրագրային-դասագրքային օրթոդոքսալությունից՝ հետևելով ժամանակաշրջանի միջազգային, հատկապես ռուսական տեսական մտքի նորագույն շարժումներին, որոնց հարազատ էր իր զգացողությունն ու մտածողությունը: Նա բացեց մեր գրական աչքն ու հայացքը գրականության տեսության ժամանակակից այնպիսի խնդիրների հանդեպ, ինչպիսիք են՝ գեղարվեստական ոճը, նորարարությունն ու արգիականությունը, ոճի ազգային սուբստանցիան, հոգեբանությունը և ինտելեկտուալիզմը, արվեստագետի անհատականությունն ու արվեստի ընթացքը, ոճային պայմանականությունը, ձևաստեղծումը և ձևի հաղթահարումը, «գիտակցության հոսքը» և մտքի համագրությունը, «մարմնի զգացողությունը» և աբստրակցիան, ոճի ֆորմուլան, ինտելեկտուալիզմը որպես գեղարվեստական կառուցվածք, նշանային և կերպարային մոդելները, ոճական պայմանականությունը, արվեստը և գիտությունը, տարածություն-ժամանակը, ռեալիզմը և տեսիլքները, բառի գեղագիտությունը, գրական երկի ամբողջականությունը և այլն, տեսական հարցերի ընդարձակ մի համալիր, որը ոչ միայն զուտ գիտական հետաքրքրություն է, այլև ուղղակիորեն հարաբե-

րում է դրական-գեղարվեստական արարչության ընթացքին՝ աղդելով նրա վրա և ազդվելով նրանից:

Լինելով նոր մտածողության ջատագով և արտահայտիչ, Արամ Գրիգորյանը մտքի արմատներով հիմնավորապես կապված է մեծ դասականությանը, որը միշտ նոր է իր հավերժականությամբ և ամփոփում է մարդկային բնությունն ու աշխարհը: Սա նրա տեսաբանությանը հաղորդում է ժամանակային երեք չափումների ընդգրկում՝ այսօրը երեկվա շարունակությունն է ու վաղվա սկիզբը, և, օրինակ, «ոճի ֆորմուլան», բացահայտում է արվեստի, դրականության հին ու նորագույն գեղարվեստական հուշարձանների «հուշումներով», «Արվեստի ոճը ոչ թե պարզապես արտացոլում, այլ մոդելավորում է աշխարհը, և աշխարհի այդ մոդելը... նրա գեղարվեստական ըմբռնումի ձևն է: Արվեստը մոդելավորում է արտաքին աշխարհը և դրանով իսկ ստեղծում իր ներքին աշխարհը, որը շատ բարդ հարաբերություն ունի արտաքինի հետ»: Զափաղանց հետաքրքիր են Գրիգորյանի դատողությունները նաև ինտելեկտուալիզմի մասին, որոնք գալիս հանգում են հետևյալ ճշմարտությանը. ինտելեկտուալիզմը պայմանավորված չէ ստեղծագործության տեքստի խելոքությամբ, նրա խելքի պաշարներով՝ ինչպիսի խելոք մտքեր էլ արտահայտեն հեղինակն ու հերոսները, առավելապես այն գիտակցաբար կամ ենթագիտակցորեն հաշվարկված գեղարվեստական կառուցվածք է, որ երևան է եկել գրականության զարգացման համեմատաբար նոր շրջափուլերում, դառնալով հատկապես քսաներորդ գարի դրականության ու արվեստի մի էական հատկանիշը: Այս և այլ խնդիրներն արծարծելիս, մանավանդ գեղարվեստական բարձր ու բարձրագույն արժեքների մակարդակում, Գրիգորյանը չի իջեցնում կամ արժեզրկում մեկը՝ ասենք, ինտելեկտուալիզմի հակակշիռը, և բարձրացնում մեկ ուրիշ երևույթ, թեև ունի, և չի կարող չունենալ, որոշակի ներքին համակրություն ու կողմնորոշումներ՝ իր սրված աչքն ու միտքը, իր հայացքի ուղղությունը, այլ հետամուտ է գրականության ու արվեստի դարավոր գեղարվեստական զարգացման ընթացքին նաև իբրև օբյեկտիվ, իր սերերից ու նախասիրություններից վեր կանգնած ճշմարիտ պատմաբան, որ ցույց է տալիս տեսության դաշտի զարդացման ու փոխակերպումների պատմությունն էական նշաններով: Գիտնականի այս «բարոյականությունը» շատ կարևոր է՝ մահվան դատավճիռ չտալ այսօր քո գիտական կաղապարից դուրս գտնվող երևույթներին, այլ փորձել հասկանալ ու գնահատել զարդացման երկար շղթան փոխկապակցությունների մեջ:

Արամ Գրիդորյանը հիանալի է տիրապետում տեսական մտքին՝ Արիստոտելից մինչև մեր օրերը, դիտի մտքի գլխավոր գեմքերին, նրանց յուրաքանչյուր գործը ոչ պարզ ընթերցմամբ, այլ խոր ներթափանցումով, այս ամենը նա «լվանում» է իր հոգևոր աշխարհում՝ որսալով այն ոսկե հատիկները, որոնք պայմանավորում են տեսության լիարժեքությունը և զարգացման նոր ազդակներ տալիս: Արամ Գրիգորյանի աշխատությունները լի են հայ, ռուս և արևմտյան անպարադիծ ժամանակի գրականության իրողություններով, որոնք նա տեսաբանության հարցերի տեսանկյունից վերլուծելով ցույց է տալիս, որ, իսկապես, գեղարվեստը լոկ աշխարհի

արտացոլանք չէ, այլև այդ աշխարհի մոդելի մակարդակում, ինքնարտացոլանք, իրենով աշխարհի հարստացում, աշխարհը ստեղծված է, բայց և ամեն պահ ստեղծվում է նորից ու դարձյալ՝ գրող ու արվեստագետ մարդու աստրալ ոգեղենությամբ:

Գրականության տեսությունը չի վերաբերում միայն գրականությանը, այն սնվում է և արվեստի իրողություններից, հարաբերում նրանց, որոնք, բոլորը միասին, ունեն խորքային ընդհանրություններ և արտահայտում են ժամանակաշրջանի գեղարվեստական մտածողության էությունը, նրա «սահմանադրության» շատ օրենքներ: Արամ Գրիգորյանի տեսաբանությունը ներառում է նաև թատրոնի, կինոյի և հատկապես կերպարվեստի փաստերը, ցույց տալիս ու ապացուցում, որ նրանցից յուրաքանչյուրը գտնվելով առանձնահատուկ տիրույթում, ընդհանրական, մեծ ու ամբողջական ոճամտածողության դաշտի անքակտելի մասն են: Կա ժանրային ոճ ու մտածողություն, գրականության ու արվեստի տեսակի, բայց կա նաև բոլորին միավորողն ու հարազատացնողը՝ դարաշրջանի ընդհանրական ոճ, այս ընդհանուրի իմաստավորումն Արամ Գրիգորյանի տեսաբանության հետաքրքիր ու արժեքավոր դիտական շերտերից է, նրա մտքի շարժման ուղղությունը մասնավորից դեպի ընդհանրականություն: Այստեղ ներառվում է և փիլիսոփայությունը, գուցե երբեք փիլիսոփայությունն այնքան ներկա չի եղել գեղարվեստական փորձում, որքան XX դ. ժամանակային տարածքում, միայն էկզիստենցիալիզմի՝ իր անցյալի արմատներով, ներթափանցումը գրականություն, սրա վառ արտահայտությունն է: Գրիգորյանի աշխատությունները շնչում են և փիլիսոփայությամբ, նրա համար այն բանալի է՝ բացելու տեսական շատ խնդիրների դժվարաբաց դռները:

Գրիգորյանն առաջիններից էր, որ ներքին «առարկայական» զուգահեռներ տեսավ հայ գրականության մի քանի խոշորագույն երևույթների՝ հատկապես Տերյան, Չարենց, Բակունց և համաշխարհային գրականության միջև: Դա ուներ և հայոց գրականությունն արժանվույնս միջազգայնացնելու միտում, և համաշխարհային գրականության համատեքստում գեղարվեստական արժեքների տեղն ու նշանակությունը որոշելու նպատակ: Երկուսի էլ բարձր կարևորությունը կասկածից վեր է: Բնականաբար, Գրիգորյանի աշխատությունները հրատարակվել են շատ երկրներում, սակայն գուցե ավելի կարևոր է, որ դրանց վրա հենվում են և մեծանուն գիտնականներ, օրինակ՝ Լիխաչովը խոստովանել է, որ «Գեղարվեստական ոճի պրոբլեմները» գիրքը «ինձ պետք է», իսկ Խրապչենկոն գեղարվեստական ոճն ուսումնասիրող լավագույն հեղինակների՝ Ժիրմունսկի, Էյխենբաում, Շկլովսկի, Թվում նշում է և Արամ Գրիգորյանին:

Արդեն կես դար Արամ Գրիգորյանն անբաժան է մեր գրական ու գիտական ասպարեզներից: Պարբերական մամուլի, գրականության և մշակույթի պատասխանատու, Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի տեսության բաժնի վարիչ, Հայաստանի գրողների միության վարչության քարտուղար, Երևանի Ռուս-հայկական (Սլավոնական) համալսարանում ռուս դպրության ինստիտուտի գիտական ղեկավար, բանասիրական գիտությունների դոկտոր, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, ՀՀ Պետական մրցանակի

դափնեկիր: Որտեղ և ինչ էլ արել և անում է՝ Արամ Գրիգորյանի համար գա բնավ պաշտոն չի եղել և չէ, այս բառի էությունն այնքան օտար է նրա ներքին մարդուն, այլ ամենօրյա տքնաջան աշխատանք ու սեր: Նրա թե՛ ներքին մարդը և թե՛ անցած ուղին մեր գիտության ու գրականության լուսավոր էջերից են, ընդօրինակման արժանի բարոյական և հոգևոր արժեքներ:

ՀՀ ԳԱԱ ՀՈՒՄԱՆԻՏԱՐ
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲԱԺԱՆՄՈՒՆՔ
Մ. ԱԲԵՂՅԱՆԻ ԱՆՎԱՆ
ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ
ՀԳՄ ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅՈՒՆ
«ԳՐԱԿԱՆ ԹԵՐԹ»